

ՓԻԼՈՆԻ ԵՐԲԱՅԵՑԻՈՅ

ԲԱՆՔ ԵՐԵՔ ԶԵՒԻ Ի ԼՈՍՏ ԸՆԾԱՅԵԱԼՔ

Ա. Բ. ՅԱՂԱԳՍ ՆԱԽԱՆԱՄԻԹԵԱՆ

Գ. ՅԱՂԱԳՍ ԿՆՆԴԱՆԵԱՅ

Ի հին քարգմանոթեան եղելոյ ի յոյն բնագրե
բան առ բան և այժմ նոյն գառաշինն փո-
խեալ հաստադրմոթեամբ ի շատին քար-
բառ քշխատասիրոթեամբ Հ. Մկրտիչ վ. ի
Մխիթարեան Ազգերեանց :

Ըստ մեր խոստման, ահա առիկ կը ծանօթա-
ցընենք Լէոփարտի քննադատականները Փի-
լոնի այս զբօնն ունեւալ որ տղազբօնած է
Լէոփարտի զրոյց մէջ. չունենալով առ այժմ
ձեռքերնիս նշանեալ Գրոնիկոնի վրայ բրած
քննադատականը՝ որ քան զՓիլոնիւր շատ աւել-
ի հետաքրքրական է մեզի համար: Զայս միայն
դիտել կու տանք առանձն՝ որ Լէոփարտի հա-
յրէն լեզուի անհմտւոյ ըլլալով, իր քննադա-
տութիւնը կ'ընէ հայերէնի վրայէն թարգմա-
նուած լատիններէն թարգմանելով ընդ յունին:

Հ. Ա. Ղազիկեան

Փիլոնի աղեքսանդրացւոյ հրէի գրած
գրքերէն շատերը՝ որ կը պահպին առ արև-
մոտայս, ոմանք կը պահուին նաեւ ցայսօր
առ Հայս, թարգմանուած իրենց լեզուաւ
Փոքր Թէոդոսի ժամանակ, այսինքն է տասն
կէորս դար յառաջ. որոնք ծանօթացան
Երոսլայի մեր Գերապայժառ Մայ ծիրանա-
ւորին ձեռքով 1816ին, Փիլոնի և Եւսեբիոսի
յեւ չտպագրուած մի քանի պրոց վրայօք
խօսած ճառին մէջ: Ասոնցմէ երեքը լոյս կը
տեսնեն արդ հայերէն, հանուած՝ Հայոց
Հիթում Բ. Թապաւորին գործածութեան
համար հայկական 795 և Քրիստոսի 1296
թուականներուն գրուած մատենէ մը, որ

1824ին՝ Լիմպելի Հայոց արքեպիսկոպո-
սական արթոսանիստ եկեղիցիէն ընծայուե-
ցաւ Վենետիկ Սուրբ Ղազարու Հայոց վան-
քին գրատան: Յիշեալ գրուածոց հայ բնա-
գրին կից՝ կ'աւելնայ տպագրութեան մէջ
նոյն բնագրին լատիններէն թարգմանութիւ-
նը՝ գրեթէ բառ առ բառ, և դարձեալ մի
քանի հատուկութիւնք բուն հին բնագրին (այս-
ինքն է յունին) երկրորդ զրոյց, որոնք կը
գտնուին Եւսեբիոսի կենսաբացւոյ Անտարա-
նական պատրաստութեան մէջ: Գրքին առջևը
գրուած է ընծայական մը հայերէն և լատի-
ներէն. նախաբան մը հայ, և նախաբան մը
եւրոպացի ընթերցողաց համար. և ի վեր-
ջոյ նախագրութիւն մը երկու առաջին զրոյց
նկատմամբ, շարագրուած կամ հին թարգ-
մանչէն, կամ ուրիշ ոճ և իցէ հայ գրչէ մը:

Առաջ աճի իշխց ներքև կը կարգացուին՝
երեք զրոյց ալ՝ համառօտ բացատրութիւն-
ներ Հրատարակչին կողմանէ. որոց մեծա-
զոյն մասը կը լուսաբանեն կամ պարզ կը
ծանուցանեն հայ թարգմանութեան մէջ գրու-
նուած միջին տեղերը: Հատորը կը փակեն
ցուցակ մը յիշատակելի իրաց և ցուցակ
մ'ալ Փիլոնի այս զրոյց մէջ արտայայտած կամ
տեխնարկած սկզբունքներուն: Հրատարակիչ
և թարգմանիչ հայ բնագրին, և անցածին
հեղինակ՝ հռչակաւոր Հայր Մկրտիչ Ազգեր՝
վարդապետ Մխիթարեան, որ կը հրատա-
րակէ այս հատորը իրեն նմոյշ մը և սկիզբն
հրատարակութեանց՝ իւր կրօնակցաց ձեռքն
հասած բոլոր փիլոնեան զրոյց, որոնք կը
պահպին արեւմտեան լեզուաց մէջ: Եւ նոյն
մեծանուն Հայրն կը յաւելու այս երկրորդ
արդիւնքն ալ առ գիտունս Եւրոպիոյ այն
արդեանց, զոր ունեցաւ 1818ին հրատարա-
կելով Եւսեբեայ Քրոնիկոնը՝ վննետիւան գե-
ղեցիկ տպագրութեամբ:

Գալով Փիլոնի այս հատորին մէջ տմ-
փոփոսած գրոց, առաջին երկուքը կը կոչուին
Յաղագս նախախնամութեան, և երկուքն
ալ ուղղուած են առ Աղեքսանդրոս ոմն,
որուն սիւ ըլլալը չի գիտցուի: Առաջնոյն
մէջ շատ փաստեր կը բերուին տպացուցա-
նելու համար, թէ աշխարհ ծնաւ և պիտի
մեռնի, այսինքն է ստեղծուեցաւ և պիտի

եղծանի. և յառաջ ֆուլուզ, կը հաստատուի թէ Ստեղծողն կը նախախնամէ ստեղծուած իրերը. և կը փակուի վիճաբանութեամբ մը իրողէմ աստեղագէտ ծննդաբանից: Երկրորդն մէջ, որ գրուած է խօսակցութեան ձեւով փոխնի և Ալեքսանդրոսի մէջ, կը պատճառաբանուի բարիներու ժամանակաւոր զրօքադրութեան և շարագործներու բարեբաղդութեան վրայ. և թէ (ըստ հեղինակին) և ոչ իսկ ժամանակաւոր կերպով շարք երջանիկ է, և բարին՝ ապերժանիկ: Ապա կը խօսուի այն իրաց վրայ՝ որ ընդհանրապէս համարուած են ախտ կամ ուղիւրական կամ պատահական անհանգստութիւնք բնութեան, մանաւանդ նկատմամբ մարդկանց. և կը շանցուի ցուցընել թէ ամէնը կարգադրուած և ուղղուած են առ բարի վախճան: Երրորդ ճառը՝ որ խօսակցութիւն մ'է նոյնպէս փոխնի և Լիւսիմաքոսի մէջ, կազմուած է զլսաւորաբար ճառելով, որ կը կեղծուի գրուած ըլլալ Ալեքսանդր անուամբ մէկէ մը՝ ցուցընելու համար թէ անասունք բանաւոր են, և փոխնի պատասխանէն, որ կը շանց հակառակը ապացուցանել:

Յերաւի, չէ կարելի ըսել՝ թէ այս զրբքերը կարենան հեշտեւ կարգացուիլ. մանաւանդ որ յոյն բնագրին մեծագոյն մասը կը պակսի, և հայ թարգմանութիւնն ալ, ինչպէս հրատարակչին ինքնին կը խոստովանի, գրուած է անհարթ և անվայելուչ ուճով, թարգմանչէն դիտուած կամ ուզուած հաւատարմութեան համար: Լատին թարգմանութիւնն ալ նմանապէս՝ հաւատարմութեան չափազանց սերնէ՝ կը հեռանայ կամու վայելչութենէ՝ և դարձեալ՝ նախքան ինքնին չոր և փշոտ են: Եւ ոչ իսկ կարելի է ըսել թէ այս գրոց օգտակարութիւն կարենայ դարձան մ'ընել հոն փնտռուած ախորժանաց պակասին: Վասն զի խնդիրներն՝ որ հոն կը ճառուին, և եղանակն ու ոճը որով կը ճառուին, և յառաջ բերուած ապացոյցներն և պատճառաբանութիւններն որ կ'ըլլուին, աշխարհի ամենէն աւելի սովորական և հանրածախս բաներն են: Համարեմ այսու ամենայնին՝ կրնայ ըլլալ որ Հին գրոց մէջ

շատ օգտակարութիւն չըլլայ, բայց քիչ անգամ կը պատահի՝ որ բոլորովին պակսի այդ: Եւ այս ըսել չէ թէ բոլոր Հին գրեքը, որը աւելի որը նուազ, արդինքնէն յաւ գրած ըլլան, կամ թէ Հին բաները աւելի կարեւոր են քան արդինքնը: Եւ եթէ գրուածոց մէջ բոլորովին կը պակսի նորութիւնք՝ կը պակսի օգտակարութիւնը. վասն զի ինչ բան որ և ոչ իսկ մասամբ մը նոր չէ, արդէն ծանօթ է. և նա որ ծանօթ բաներուն վրայ կը գրէ, և սովորական կերպով կը գրէ՝ գրածը բոլորովին ոչ ինչ է: Արդ՝ արդի գրուածոց մէջ ինչ որ չէ կամ նորագիւտ, կամ նոր կերպով յառաջ բերուած, և կամ նոր կերպով բացատրուած՝ ամենայն կերպով ծանօթ և սովորական է. բայց ոչ այսպէս Հիններուն մէջ: Վասն զի ժամանակաց հեռուորութեան պատճառաւ՝ Հին հեղինակներն ըսուած անթիւ բաները՝ որոնք իրենց ժամանակին ամենէն աւելի սովորական և հասարակ բաներն էին, մեր դարուն համար ամենանոր և անծանօթագոյն բաներ կը դառնան: Եւ յաճախ Հին գրչաց ամենափոքր մասնիկներէն, կամ չհրատարակուած յառաջագոյն, կամ լաւ չնկատուած, յանկարծական տեղեկութիւններ կ'ելլեն, որք կ'օգտեն հնութեան և Հին մարդուն պատմութեան, որով և մարդկային ազգին ընդհանուր գիտութեան, և երբեմն կը յաւելուն նաև մեծապէս և յառաջ կը տանին այս կամ այն կրթութիւնը կամ հրահանգը կամ հայեցողականը:

Ուստի պէտք չէ արհամարհել հնոց յիշատակարանները, և մանաւանդ իրենց մանտեանները, թէպէտ և առիթ բերան ամենին օգտակարութիւն ուր չցուցընեն, ինչպէս կը պատահի փոխնի այս գրոց մէջ: Եւ կը գտնեմ եւ երկու յիշատակութիւններ, որ ինչ ամենայն մտադրութեան արժանի կը թուին:

Առաջինը կը կարդացուի յիշմ 18 և 19, և է այս. Արդ առաստիկ և որք մշակութեան ոչ անբաժնի են, յորժամ ցորեան յերկիր ընկեցնեն, գայն որ յօջան են գնացք յինեւրոք ցեղաբնիկ վրտի՝ յորժամ անասանդեան, զօրան կոծել ջնօք ճեւնաքիկեն. ոչ վասն իոր

գործել զայս կամեցեալ, քանզի ոչ ոսնին
 պատշաճ, քայց արտաւտաւոր ձեռնարկու-
 քեամբ զվնասակարն սերման օրագնաց ի
 րան հալածել յառաջագոյն կամին: Եւ ոչ
 զսոցանէն անխմաստարիւն վարկցոյք, օդոյ
 տանջանս ի վերայ ամեղով առ տնւարիւն
 սերմանցն: Գիտենք որ այսօրուան օրս նա-
 ւովարք, փոթորկի առնն՝ սովոր են թընդ-
 անօթի հարուածներով վանել զայն կամ
 ցրուել, պատռելով օդը, և մասնատուպէս
 թաթառ կամ սիփոն կոչուած երևութից հան-
 դիպած առնն: Բայց թէ հին երկրագործք
 այդպիսի պարագայից մէջ խորագաններով
 կամ գաւազաններով օդը ծնծած ըլլան, չեն
 դիմեր ոչ Պալլադիոս և ոչ Կոլումելլա, թէ-
 պէտ և երկուքն ալ շատ հնարքներ կը
 սորվեցընեն մերկի դէմ. և ես չեմ յիշեր
 կարդացած ըլլալ այդպիսի բան մը և ոչ մի
 հեղինակի քով: Ստոյգ է՝ որ այս բրածնին
 աւելորդապաշտութիւն մը չէր, ինչպէս Կո-
 լումելլայէ և Պալլադիոսէ այս առթիւ յիշուած-
 ներն մեծագոյն մասը, այլ յառաջ կու
 գար զեղջկական գիտողութեւն մը, որոյ
 մասին բնապատումը կարող են իմաստասի-
 րել: Միւս տեղին կը կարդացոյի 20 և 21
 իջից մէջ, և է հետեւեալը. «Քանզի երբ առ
 (ոգին) իմաստի՝ յառաջ քան զգործսն՝ զիմաստն
 յառաջագոյն սկսանել, ոչինչ անխորհրդ-
 քործեամբ գործի ոգայն. այլ որ զորոյրն
 շարժէ զաշխարհիս քանական մասանցն հա-
 տուն ի ձեռն իւր տալով. «Քանզի որք ա-
 րուեստիս՝ այնք որք իմաստուն արուեստին
 գործիք եղեն, ի ձեռն մարդոյն արանց՝ այ-
 նոցիկ որք զնոսա տեսանեն՝ է՝ տեսանելի,
 զի թիպէտ և իմաստուն արուեստագետն
 հետ իցէ: Քանզի յեղեղոցն յայտնի գործ
 ցոցանէն զարարիւն, զի թիպէտ և առ ոչ
 իցէ մօտ: Արդ անասանցն ի պղծին նիւ-
 րոյ երաժշտական արուեստագետն իմաս-
 տուն կազմած արուեստաւոր հանձնարով ժա-
 մանակացս զցոցական գոյթին կատարեալ՝
 քաղաքի տայր, որպէս զիարդ ժամանակացն
 զքանակործարիւն չափովք անշատման քաժա-
 նելովք՝ մատուցէ այնոցիկ, որք կամին
 զըմբռնումն հասանելոյն: Քանզի քոյրարակին
 արուեստաւոր պարարեքործիւն զերկուսա-

սանածամեայ տիւն՝ քանրնեցելովք մեկուս-
 տարեալնք ազդեր: Եւ առ այդոյնք և զայն
 ևս մանաւանդ պարտ է զարմանալ, յորժամ
 զանշոյն նիւր զանազան ձեռքի կերպագոր-
 ժեալ՝ շնչաւոր ձայն սմա տալ՝ ազգի ազ-
 գի կեղեքանիս յիմաստուն արուեստէ, և ձայն
 շնչաւոր կենդանեացս առեալ գործոյն :
 Հոս տեսակ մը ժամացոյցի վրայ կը խօ-
 սուի, ինչպէս իւրաքանչիւր ոք կը տեսնէ:
 Կը փափաքէի բերել նոյն նկարագրութեան
 նախընթաց և հետեւորդ խօսքերն ալ, որպէս
 զի յայտնի կերպով տեսնուի, որ այս ժամա-
 ցոյցը ոչ արեգակնային է և ոչ ալ ջրային,
 և ոչ ալ առաքի: Վասն զի հեղինակը աշ-
 խարհիս մեքենան կը բաղդատէ ժամացոյցի
 մեքենային հետ, և կ'ըսէ՝ թէ ինչպէս ժա-
 մացոյցին մեքենան կը ցոյցընէ իմաստուն
 և հմուտ արուեստաւոր մը, թէպէտ և սա
 հետի ըլլայ, այսպէս աշխարհիս մեքենան,
 թէպէտ և իւր ստեղծողը չտեսնուի, սա-
 կայն և այսպէս զինքը կը ցոյցընէ: Այս
 բաղդատութիւնը տեղի պիտի չունենար ոչ
 արեգակնային, ոչ առազէ և ոչ ալ ջրային
 ժամացոյցներուն նկատմամբ. որոց արուես-
 քը ամենապարզ էր՝ բաղդատմամբ աշխար-
 հի արուեստին, և էր ամենայայտնի, մինչ-
 դեռ աշխարհինը ամենածածուկ: Բաց աստի,
 այլ որ զրոյրն շարժէ զաշխարհիս քա-
 նական մասանցն հաստուն ի ձեռն իւր
 տալով, որոնցմէ ետքը կու գայ բաղդատու-
 թիւնը, կը ցոյցընեն որ այս աշխար-
 հիս հետ բաղդատուած ժամացոյցին մէջ,
 ծածուկ շարժիչ զօրութիւն մը կար, որ չի
 գտնուիր արեգակնային ժամացոյցին մէջ. և
 առազէ ժամացոյցներու մէջ եղած զօրութիւ-
 նը ամենայայտնի է, նոյնպէս և ջրայինն-
 բունն ալ ոչ ինչ նուազ ծանօթ: Եւ եթէ
 հեղինակը ջրային կամ առազէ ժամացոյց-
 ներու վրայ խօսիլ ուզած ըլլար, պիտի չը-
 սէր ի պղծին նիւրոյ առանց ուրիշ բան
 աւելցնելու: Եւ Բնչ յարարեքութիւն ունին
 այս ժամացոյցներն, կամ արեգակնայինը,
 միւս այն զարմանալործ մեքենայից հետ՝
 զորս կ'անկարելի հեղինակը անմիջապէս ժա-
 մացուցէն ետքը, կը կնքեմ՝ որ փլուծէ նշա-
 նակուած ժամացուցական մեքենան, էր ըս-

սուզի գաղտնի արուեստով կազմուած, և գուցէ քիչ անմիան մեր զսպանակով կամ ծանրոցով ժամացոյցներուն արուեստին: Եւ այդ մեքենային վրայ՝ որ գործածութեան մէջ է, ինչպէս կը տեսնենք, մեր թուականին առաջին տարիներէն ի վեր, չեմ գիտեր թէ մինչև ցարդ արդի գիտունք ունեցած են արգիօք ստուգութիւն մը կամ տարակոյս:

Երբորդ Փրոց մէջ կ'ընթերցունք շատ մանրամասնութիւններ զանազան կենդանեաց, և կենդանեաց զանազան տեսակաց սովորութեանց, ճարտարութեանց և գործոց վրայ, յոր՝ Եւ այդ գիրքը կրնայ բաղդատուի Պլինիոսի բնական պատմութեան, և Եղիա-նոսի կենդանեաց պատմութեան հետ: Եւ գուցէ հան գանդին՝ շատ գեղեցիկ նորութիւններ՝ որք օգտակար ըլլան բնութիւն ուսումնասիրողաց, և նաեւ բնագիտագիտաց:

Հին թարգմանչին վրայ կարօզ պիտի չըլլայինք գրեթէ դատաւարան ընել, պակսելով Փիլոնի այս գործոց բնագիտները, եթէ զոնէ մի քանի պատահիկներ չգտնուէին անկից, ուրք կը կարդացուին, ինչպէս ըսի արդէն, Եւսեբեայ Աւետարանական պատարասութեան մէջ. և ամէնն ի միասին գրեթէ երկրորդ գրոց կ'էսին չափ կ'ըլլան: Արդ, ոչ միայն ճշմարտութեան սիրոյն համար, այլ մա-նուանդ իբրեւ ծանուցում մը անոնց՝ որ կրնան օգտուի այս Փիլոնեան գործերէն, և զի բազմահոյակ Հրատարակչին աւելի եւս մտադրութիւն ընէ նոր Հրատարակելիքներուն, պիտի ըսեմ որ հին Հայ թարգմանիչը որչափ Հատարարիմ իբր թարգմանիչ, նոյն-չափ անհաւատարիմ կ'ըլլայ անհմտութեամբ: Անթիւ են Եւսեբիոսի Հայ թարգմանչին սխալները, բայց Փիլոնի թարգմանչին սխալները մեծ աշխատութեամբ կրնան համարուի. վասն զի յոյն պատասխիկներուն համապատասխանող երեսներէն և ոչ իսկ մէկ հատ կ'անցնի՝

ուր ուշադրութեամբ նայելով, և չայանդուն բազմաթիւ սխալներ: Եւ զարմանալի չէ Փիլոնի թարգմանչին՝ բնագիրը հասկընալուն մէջ՝ քան Եւսեբիոսի թարգմանիչը սղիտա-գոյն հանդիսանալը. վասն զի այս Եպիս-կոպոսէն իւր Փրոնիկին մէջ գործածուած թէ՛ բառերը և թէ՛ կազմութիւնները՝ ամենայնպէս, զիրիմաց և սովորակաւ են, մինչդեռ Փիլոնիները են ամենամթնն, բռնագրօս, քաշ-կըտուած, նոր, կամ թէ քիչ գործածուած, և երբեմն գրեթէ անծանօթ: Թարգմանչին Հրատարակչէն ուղղուած կամ նշանակուած սխալները հազիւ հարիւրին մէկն են, որ օրբարուելու և նշանակուելու կարօտ են: Եւ այս կ'ըսեմ, նկատմամբ թարգմանութեան այն մասերուն միայն՝ որ կը համապա-տասնուին բնագրին մնացորդներուն: Զորս կարելի է ուղղել, ամենայն ուշադրութեամբ և խնամով, բաղդատելով զանոնք բառ առ բառ յոյն բնագրին հետ: Բայց այս ձեռ-նարկը ինչ չի պատկանիր: Միայն պիտի ակ-նարկեմ, առանց ո և է ընտրութեան, Հայ թարգմանչին այս կամ այն սխալը, աւելի օրինակի քան թէ ուրիշ բանի համար, մտա-լով միշտ երկրորդ պատասխիկին սահման-ներուն մէջ և 55 էջին մէջ յոյնը կ'ըսէ. Μή τοσοῦτόν ποτε ψευθείας (կարգա-ψευθείας) τῆς ἀληθείας ὥς εὐδαίμονά τινα τὼν φαύλων εἶναι νομίσαι. և Հայերէնը, Մի՛ ալեւափ երբեք սոստ աւիցես ի ձըշ-մարտոքեմեմ Աղեքսանդրէ, միեւ զի րա-րեքսախտիկ գոր ի րշուապախանացն կարծեք, փոխանակ ըլլալու Մի՛ ալեւափ երբեք մա-լորիցիս ի ձըշմարտոքեմեմ: Հիտեանք երեսին մէջ, յոյնը կ'ըսէ. Διότι τὰ μὲν ἀργύρου μέ-ταλλα καὶ χρυσὸς, γῆς ἔστί ἡ φαλοτάτη μοῖρα, τῆς πρὸς καρπῶν ἀνειμέντης γένεσιν ὀλῶ καὶ τῷ παντί λειπομένη, զոր Հայն կը թարգմանէ. վասն որոյ այն որ արծաթոյ րովքն են և ոսկոյն՝ երկրի է վատարապոյն

1. Դոյն այդ ճշմարտութեան սիրոյն հա-մար մենք եւս կը ծանուցանենք, որ Լեփար-տիկ Փիլոնի այս գրոց մէջ նշանակած սխալ-ներէն ոմանք՝ լատիներէն թարգմանչին են. որոնք թերեւս մասամբ յառաջ եկած են հա-յերէն թարգմանութեան լաւ ուշադրութեան

չգրուելէն, ինչպէս պիտի տեսնեն ընթերցողք մասամբ ալ՝ Հայ թարգմանութեան հեղինա-բան խրթնութեան: Իսկ այլք՝ հին թարգման-չին անուշադրութեան կամ սխալ ընթերցման արդեւք են:

մասն. աս խոսողն րոդեալ ծնունդս րոշու-
րիւն և ամենայնի մնացեալ, մինչ պէտք էր
լսել... եւ վաստարագոյն մասունքն երկրի,
և ըստ ամենայնի նուաստագոյնք քան ըզ-
մասունքն պահմանեալս ի ծնունդս պտղոց :
Քիչ ետքը կը գնէ facile փոխանակ libe-
ter¹, և զանց կ'ընէ քոտէ երբեմն բա-
որ. 57րէ Լըին մէջ Եսլէօծա ծէ Կաթարօն
մետալաչօն, Լածիյալ տէ Ծառ, խօսքերը կը
թարգմանուին. Բայց յաղօրս կայցէ մաքրու-
թեան հասանել, բժշկելի զրեւիս. որ պէտք էր
ըլլար, Բայց յաղօրս կայցէ սրբաբերանց հա-
ղորդ լինելով՝ բժշկել, և այլն. 58րէ Լըին մէջ
տէ Հաղբադիմատ, կենդանագիր բառը Հայն
կը գնէ կենդանի նկար². Հետեան Լըին մէջ
յոյնը կ'ըսէ. Յըրսոյն, չըսօն, ձօղմօն, էթի-
սիմօն, քալաւմատօն քլիչօն, որ է argentum,
aurum, non signatum, signatum, po-
culorum multitudinem. Հայն կը թարգ-
մանէ, argentum, aurum, tum ignobi-
lium, quam nobilium poculorum co-

pinum³. 60րէ Լըին մէջ, փոխանակ πεπορ-
νευκυτα բառին (զոր Մանսէյ⁴ տառնց որ
և է հարիի մը կը փոխէր ի πεπονηρευ-
κυτα), Հայը կ'երկի կարդացքը է πεπορ-
νευκυτα կամ προνευκυτα, որոցմէ սին ալ
ուզուի զրել, ամենածաղբական բան պիտի
ըլլայ փրկոնի նոյն տեղոյն մէջ. 61րէ Լըին
մէջ, յոյնը կ'ըսէ բժշկաց Համար. Իνα μ')
διαμαρτανωσαι των προσφορων εις το σωζειν.
զի մի վրիպեցիս (բժիշկը) յայնմանէ որ դէպ
իցէ նոցա (հիւանդաց) փրկութեան, և Հայը, ne
priventur sanitate ipsis conveniente.⁵
Քանի մը տող վար, տօն βασιλεα λογισμων,
այսինքն է, աս քաւաւորական խորհուրդն
(rationem), Հայն ունի աս քաւաւորա-
կան տեմական⁶. 62րէ Լըին մէջ լի եմք,
փոխանակ լի էին, և անհրաւորեան, փո-
խանակ անհրաւորաց. Հետեան Լըին մէջ
Թէրօս Եսլէօնտօս, որ լսել է յաղորդ ա-
մարայնոյն, կը թարգմանուի æstate super-
veniente⁷, և Կալ ձլլօն թոնա քորօն և

1. Յունարէն ձօնաց բառին դիմաց՝ Հայե-
րէնն ունի խնդրաբեանք, որ հերչ է, և այլ նախ-
նիք այդ բառը թարգմանած են խնդրաբեանք,
յօժարութեանք, յրմարտութեանք, քալախութեանք,
ոչ երբեք դիտեալ. սխալ լատիներէն թարգմա-
նումբեան մէջ է:

2. Հայերէն թարգմանութիւնը կը գնէ կեն-
դանագրութեան, որ հերչ է, և այլ նախնիք
Հաղբադիմա, կամ — քոս բառը թարգմանած են
նկար, կենդանագիր, կենդանագրութեան. որով
լատիներէն թարգմանութեան vivis բառը աւե-
լորդ է:

3. Յունարէն ձօղմօն և էթիսիմօն բառերուն
դիմաց հին թարգմանիչը կը գնէ աննշան և նը-
շանատ քաւաւոր, որ հերչ են. Եւ Ելից զորո-
ւել ի զլ. Լ. 42. «Έγένετο δὲ τὰ μὲν. ὁσηοῦ τοῦ
Ἀδὰμ, τὰ δὲ ἔπειτα τοῦ Ἰακώβ, ἰσχυροῦ, ἰσχυροῦ
է նշուպէտ. Իս լինելի աննշանն լաւաւնօ, և
նշանատուր Յակովբայ, և Եւ լայկ. Բաւազորոց
մէջ նոյն ինքն է. Աւգեր, Աննշան բառի դի-
մաց կը գնէ յուն, ձօղմօն, և լատ. Cui si-
gnatum, seu nota non est impressa; non si-
gnatum, և փրկոնի այն այս տեղին ի վրայու-
թիւն կը բերէ. զարմանալի է թէ ինչպէս այս
առմամբ լինէ թարգմանած լատիներէն թարգ-
մանութեան մէջ:

4. Թով. Մանսէյ հրատարակած է փրկոնի
իր ձեռքն հասած գործերը՝ Հետեան մական-
դրութեամբ. Opera quae reperiri potuerunt
omnia (gr. et lat.), textum cum mss. contulit,

quamplurima etiam e codd. vaticano, medico et bodleiano, scriptoribus item vetustis, nec non catenis græcia, ineditis, adjecit, interpretationemque emendavit, universa notis et observationibus illustravit TH. Mangey. Lon-
dini, Bowyer, 1742, 2 vol. in-fol. Այս գործը
քանի մը անգամ ապագործած է՝ սրբազորուելով
յայլոց:

5. Հայ. թարգմանութիւնը կը գնէ. Ձի մի
փրկուցիս յայնմանէ՝ որ դէպ իցէ նոցա փրկու-
թիւն. յորում միայն փրկութիւնը՝ փրկութեան
ընելով, իմաստը կ'ըլլէ բոս յունարեանն:

6. Հին թարգմանութիւնն ունի. Աս քաւա-
ւորին խորհուրդն հասանել ոչ կարացեալք,
քայց պիտի ի պատշաճով դրաց նաղիս նաղ
հասանալք: Քերականօրէն գուցէ կարելի է մեկնել
աս քաւաւորին խորհուրդն զորում երբեք աս
քաւաւորական խորհուրդն: Վասն զի, ինչպէս գի-
տենք, երբեմն ածականք զայականի ձև կ'աւանդ-
նէ կ'ըլլայ. յայտառ տիպոյ և արծաթոյ, փոխա-
նակ ոսկեղենի և արծաթեղենի, (հմտ. Զարգ-
ել 337, 747, էջ 497, 4192, 45.) հոս ալ լինե-
աւ նոյն կանոնը զործածած ըլլայ հին թարգ-
մանիչը, որ նոր թարգմանիչն ուշադրութեան
վրայել է:

7. Հայ. թարգմանութիւնը կը գնէ. Իսկ ա-
ման յործած հասեալ լինի, այսինքն զար-
գացեալ, հասանելեալ: Նախնիք Եսլէօն բառը կը
թարգմանէ Հասանել, զարգանալ, ի չափ հա-
սանել, պայծառանալ, եւս և մոգանալ (Եսլէօն

այլ ազգք չարեաց, թարգմանուեր է՝ և այլ սովորոթիւնք հերանուաց : Վերջապէս, 66րէ երեսին մէջ օծ՝ օծէ տէ օն, այսինքն ու կարելով, կը մեկնուին, իբր զի որպիսի ոք էր, և Հ. Ազգեր թուի թէ՛ կը հետևի այսպիսի թարգմանութեան :

Բայց սակայն, թէպէտ և հին թարգմանչին սխալները անթիւ են, այսու հանդերձ, ինչպէս յոյն պատառիկները կ'օգնեն սրբազորելու թարգմանութեան այն մասունքը՝ որ իրենց կը վերաբերին, այսպէս թարգմանութիւնն ալ փոխադարձաբար կ'օգնէ սրբազորելու յոյն պատառիկներուն մէջ զրչաց սխալները : Օրինակի համար, 54 էջին մէջ, փոխանակ լոցւոյն սսնէսեաւի, զոր Ման. ժէյ՝ ֆիլոնի գործոց հրատարակիչը՝ կը փոխէր ի լոցւոյն սսսսսսսս, հայր սքանչելի կերպով կը կարգալ լոցւոյն փոսեաւ : Նոյն էջի յունարէն վերջին տողը, հայր Ման. ժէյի հետ կը քնէ օւսոն փոխանակ օւսոմոնի : 55 էջին մէջ հայր կը հաստատէ Ման. ժէյի սրբազորութիւնը, որ կը գրէր ծելոն քարասսէսսս փոխանակ ծելոն քարասսէսսս : Եւ հետեւեալ էջին մէջ, հայր կը կարգալ Վիգե. րիոսի հետ, հրատարակիչ Եսեբեայ Աւետարանական պատարասութեան, էստրոնենտոն փոխանակ էստրոնենտոյի : Այսպէս նոյն էջին վերջին յունարէն տողին մէջ հաստատելով Վիգեբիոսի և Ման. ժէյի եղած սրբազորութիւնը, կը կարգալ փոքրէ փոխանակ փոքրէի, զոր այժմեան հրատարակութիւնը և Եսեբիոսին,

ներն ունին : Սրբալ փոքրէ օքտաօչէտ քլիֆէ, և Ման. ժէյ կը գրէր : Սրբալ փոքրէ օքտաօչէտ քլիֆէ : Ես կը գրեմ : Սրբալ փոքրէ օքտաօչէտ քլիֆէ : 57 էջին մէջ, փոխանակ ծելոստիլի, հայր կը կարգալ քաւստիլ, և թերեւ լաւ : Հոսկ, 60 էջին մէջ, կը հաստատէ Վիգեբիոսի և Ման. ժէյի սրբազորութիւնը, այսինքն է տսփոլաստոսսսսս փոխանակ տսփոլաստոսսսս :

Կը փափաքէի որ մեր բազմահմուտ Հրատարակիչը, Քիլիոնի միւս գործոց մէջ՝ զորս միտք ունի հրատարակելու՝, բարոյութիւն զանց չընէր յոյն պատառիկներուն սրբազորութիւնն ու խնամքը, ինչպէս այս երեքին մէջ բրած է. կամ գէթ, կը փափաքէի որ ի բաց չլն. զորս՝ նոյն պատառիկներուն վրայ գիտուն. ներքին արդէն իսկ առաջարկուած սրբազորութիւնները :

ՅԱՊԱՐԻ ԼԵՈՒԱՐՈՅՏ

ԱՆԴՆՈՒՄԵՆԻ ՊԵՆՏՈՒՄԵՆԻ ԿՈՒՄԵՆԻ ԹԱՆՈՒԱՐԱՆԻՆ ՄԵՋ

Պ. Կիլի, իսիսի պաշտամանց հետքը գտնելու յուսով, Եգիպտոսի մէջ, Անդրիսէ քաղաքին տեղը փորել յանձնեց, զոր Ագրիանոս հիմնեց Անդրիսէ սիրելոյն անուամբ : Պ. Կիլի, փորելու հմուտ արեւելագէտի ընթից համեմատ պեղեց, իւ ճիշդ Պ. Կիլ. մէյի ըսած տեղը՝ գտաւ իսիսը : Իւ գտաւ չորս ստորերկրայ մեծ գերեզմաններ գտնուած քամանակաց, որոց մէջ կային լաւ պահպանուած դամբաններ : Նոյնպէս անոնց մէջ մեռելները՝ իրենց մեռաբանահիւս տարագործ մարդը պահուած էին :

Պատ. Եկ.) — օքտաօչէտ ծելոստիլ, ի հաստոց պահեց (գիտատուն). Եւ և՛ հաստեւ, արեւ (տապալար) (Ուկ. Մա. ԺԱ.) որով հին թարգմանութիւնը կ'արգարանայ :

1. Բազմահմուտ և բազմաբեղէն Հ. Ազգեր, որ ամբողջ միւս մեր Հայր գործերը Bibliotheca Patrum անուամբ լատիներէն թարգմանած է, և ցարգ անտիպ ձեռագած, Փիլիոնի մեր ձեռքը հասած գործերէն՝ որոց յունարէն բնագիրը չուներ, 1826ին կը հրատարակէր զեղեցիկ հատոր մը հանդերձ լատ. թարգմանութեամբ, որք են Իրենկոթիւն Իրենկոթ և Երից, ճշադ ի Սաւիտուն, ի Յովնան և յերիս մանկուն, կամ ի Հրեոտակա — իսկ ձեռագեղ ճառերը՝ որք են Յաղագս վարոց տեսականի կամ Հնսեանց, կենաց վարոց իմաստնոց, Աստուածային առիկանց աշխարհաւորեան, Երկրոտաւան ականց,

Յաղագս քանականից, Բագնին իրաց, Յաղագս քէ ու շնայնց. հրատարակեց հանրաժանօթ Հայր Գար. Վ. Ջարբէստեան, միայն հայերէն, նշանակելով իւրաքանչիւր իջի ներքե՝ մեր ունեցած երկու ձեռագրաց տարբերութիւններ, բաղադրելով յունարէն բնագիրն հետ՝ որ հասած է առ մեզ, և տեղ տեղ զննելով յունարէն հետ անհամաձայնութիւնը : Բրով Փիլիոնի հայկական թարգմանութեան մեր ունեցած բնագիրը՝ ամբողջովին հրատարակուեցան ի Ս. Ղազար : Այս վերջին ճառերը՝ որք են Յղ. Վարոց տեսականի՝ հայերէն և համեմատուած ընդ յունին հրատարակեց 1895ին, հայաբէտ Ք. Բ. Conybeare, Philo, about Contemplative life, և այլն, մակագրով :

Իրանոթիւնք թարգմանիկն :